ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/42 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«29» մայիսի 2026թ., ժամը՝ 11:00**

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ — Արթուր Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող՝ — Արմեն Թադևոսյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի պետ՝ — Սերոբ Ավագյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ — Աստղիկ Եղիազարյան

Հանձնաժողովի նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն՝ Արմեն Թադևոսյանը

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/42» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի շրջանակներում սույն թվականի մայիսի 14-ին «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին էլեկտրոնային աճուրդի համակարգով ծանուցվել է պայմանագրի նախագիծը:
1.2 «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ինչպես նաև իր կողմից ստորագրված պայմանագիրը չի ներբեռնել համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

2. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

2.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից (Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից):
2.2 Հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (պայմանագիր չի կնքվում):
2.3 Առաջարկել Պատվիրատուի ղեկավարին «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝ Արմեն Թադևոսյան

Անդամ՝

Սերոբ Ավագյան

Քարտուղար՝ Աստղիկ Եղիազարյան